ԼՈՒՍԻՆԵ ՂՌԵՋՅԱՆ. Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում, *Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 151 էջ:*

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը լույս է ընծայել Բանահյուսության տեսության և պատմության բաժնի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Ղռեջյանի «Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում» ուշագրավ աշխատությունը (խմբագիր՝ ՀՀ - ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյան):

Բազմագործառույթ, երկհակադիր սկզբունքներ մարմնավորող երկվորյակ աստվածությունների պաշտամունքը տարբեր ժողովուրդների վաղնջական մտածողության ու աշխարհընկալման արդյունք է: Հայ վիպական բանահյուսության մեջ երկվորյակ եղբայրների վերաբերյալ սյուժեները կառուցվածքային ու իմաստային ինքնատիպ դրսևորումների համաշարադրանքում ձեռք են բերել միջազգային կարևորություն: Ժողովրդական հիշյալ ստեղծագործությունների հանդեպ յուրաքանչյուր հետազոտող հանդես է բերել իր յուրատիպ մոտեցումները, ընկալումներն ու ինքնօրինակ բացահայտումները: Լ. Ղռեջյանի աշխատությունը համալրում է երկվորյակների վերաբերյալ հրատարակված ուսումնասիրությունների շարքը: Աշակերտելով Ս. Հարությունյանին, ստեղծագործաբար յուրացնելով նրա գիտատեսական ու գիտագործնական մոտեցումները՝ հեղինակը, առաջադիր խնդիրները լուսաբանելիս, նախընտրել է ինքնատիպ ուղի: Նրա հետազոտման առարկան հայ վիպական բանահյուսության՝ «Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ» և «Մասնա ծռեր» հուշարձաններում վկայված երկվորյակային առասպելների հնօրյա դրսևորումների և Հայաստանի պատմության ու մշակույթի տարբեր ոլորտներում դրանց աստիճանաբար վիպականացման ու պատմականացման ուղիների բացահայտումն ու լուսաբանումն է: Հայ վիպական ավանդության համակարգում առկա երկվորյակների առասպելի հետազոտությունն իրականացնելիս Լ. Ղռեջյանը կիրառել է տիպաբանական, համեմատական մեթոդները՝ ի հայտ բերելու տարբեր դարաշրջաններում, տարբեր ժողովուրդների կողմից հորինված վիպական հուշարձաններում առկա երկվորյակային առասպելական զրույցների կապերն ու փոխառնչությունները:

Առաջադիր խնդրի համակողմանի լուսաբանման նպատակով աշխատության «Երկվորյակների միջազգային առասպելների ընդհանուր հատկանիշները» վերնագիրը կրող առաջին գլխում հեղինակը շրջանառության ոլորտ է ընդգրկել ամենատարբեր աղբյուրներում առկա երկվորյակների վերաբերյալ մեծաքանակ նյութ: Ելնելով դրանց միջազգային հետազոտության արդյունքներից՝ նա ներկայացրել է ոչ միայն այդ իսկ առասպելների համապատկերը, այլև՝ երկվորյակային զրույցների տիպաբանական մոտիվների համակողմանի քննությամբ անդրադարձել նաև հայոց ծիսական համակարգում՝ փեսայի ծառի հնագույն իմաստաբանությանը՝ կապված «հարս ու փեսայի, իբրև մեկ անձ, մեկ մարմին» երկվորյակ զույգերի վաղնջական ըմբռնում: Խնդրի առավել համակողմանի հետազոտման նպատակով, Ղռեջյանը, միաժամանակ, երկվորյակների վերաբերյալ հայ և օտար սկզբնաղբյուրներում առկա սյուժեների ու մոտիվների զուգորդմամբ, բացահայտում է դրանց միջև առկա ընդհանրություններն ու այն ակնհայտ շեղումները, որոնք պայմանավորված են հայոց պատմության ու մշակույթի յուրահատկություններով: Հեղինակը չի սահմանափակվում սոսկ վիպական

հորինվածքներում երկվորյակ եղբայրների որոշակի հատկանիշների բացահայտմամբ ու լուսաբանմամբ:

Աշխատության երկրորդ գլխում՝ «Երկվորյակների հավատալիքի ու պաշտամունքի հետքերը Հայկական լեռնաշխարհում» վերնագրի ներքո Ղռեջյանն անդրադառնում է նաև Հայաստանի նյութական մշակույթի հուշարձաններում, մասնավորապես՝ ժայռապատկերներում, ձկնակերպ քարակոթողներում, հնագիտական առարկաների զարդամոտիվներում առկա երկվորյակների առասպելական դրսևորումներին և բանավոր զրույցներում, համանման մոտիվների զուգորդմամբ, հիմնավորում այն գաղափարը, որ հավատալիքն ու պաշտամունքն առկա են եղել Հայկական լեռնաշխարհում՝ մ. թ. ա. երրորդ հազարամյակից: Հեղինակը, հիշյալ սկզբնաղբյուրների վկայակոչմամբ, դրանց համակողմանի լուսաբանմամբ իրավացիորեն օրինաչափ է համարում երկվորյակների վերաբերյալ առասպելների սյուժետային դրսևորումների առկայության իրողությունը հայ վիպական ավանդության ողջ համակարգում:

Աշխատության «Երկվորյակների առասպելը հայ միջնադարյան վիպական հուշարձաններում» երրորդ գլխում հեղինակն առանձին-առանձին անդրադառնում է «Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ» և «Սասնա ծռեր» ավանդական վեպերում վկայված երկվորյակային առասպելների տարբեր դրսևորումներին: Չնայած հիշյալ վեպերում առկա սյուժեները տարբեր դարաշրջանների վիպաառասպելական անդրադարձներն են, սակայն իրավացիորեն յուրաքանչյուր վեպ չի համարում մի ավարտուն պատմություն: Նա դրանք առանձին-առանձին մանրազնին քննության է ենթարկում և, ելնելով յուրաքանչյուրի տիպաբանական ու կառուցվածքային յուրահատկություններից, համակողմանի բացահայտում է հիշյալ զրույցների աստիճանական վիպականացման ու պատմականացման ընթացքն ու զարգացումը՝ պայմանավորված երկվորյակ եղբայրների շուրջ հորինված զրույցների համանման սկսվածքի առկայությամբ, ավանդական մեկ ընդհանուր մոտիվաշարով, գրեթե բոլոր սյուժեների կառուցվածքային ընդհանրությամբ: Հեղինակի հետազոտական կարողությունները գերազանցապես դրսևորվում են «Սասնա ծռերի» առաջին վիպաձյուղի՝ Սանասարի և Բաղդասարի վեպը քննարկելիս: Նկատի ունենալով, որ նրանց մասին ավանդված զրույցներն ավելի ծավալուն են և աչքի են ընկնում մոտիվային ու տարբերակային բազմազանությամբ (ի տարբերություն նախորդ երեք վեպերի), Ղռեջյանը տիպահամեմատական ներքին քննության է ենթարկում այդ վիպաձյուղի երեք տիպաբանական խմբերի՝ Մոկաց, Մշո և Սասնա պատումների ընձեռած տվյալները: Հեղինակը մանրակրկիտ վերլուծություններով անդրադառնում է հիշյալ վեպի տիպաբանական երեք խմբերին և դրանցում հանդես եկող երկվորյակային զրույցների տարբերակների քննությամբ եզրահանգում, որ Մոկաց տիպաբանական խմբի փոփոխակները հակված են դեպի առասպելականացված զրույցները, Մշո պատումների փոփոխակներում միավորվում են առասպելն ու պատմությունը, իսկ Սասնա խմբի պատումներում՝ Մոկաց ու Մշո խմբերին բնորոշ մոտիվները: Փաստական նյութերի վկայակոչումներն ու դրանց քննական վերլուծությունները Ղռեջյանին բերում են այն հիմնավորման, որ Սանասար և Բաղդասար վիպաձյուղի հիմքում ընկած է Մրբազան երկվորյակների տարածված առասպելը՝ վիպականացված, պատմականացված, տեղայնացված ու ազգայնացված, և երեք խմբերում էլ գործում են երկվորյակային զրույցներին բնորոշ ընդհանուր մոտիվները: Հեղինակը, որոշ վերապահումներով, անդրադառնում է հերոսավեպի երրորդ վիպաձյուղում՝ առասպելական որոշակի հատկանիշներով օժտված Դավթի ու Մսրա Մելիքի՝ երկվորյակ եղբայրների հակադրությանն ու անզիջում պայքարին: Ղռեջյանը դա իրավացիորեն պայմանավորում է Մրսրը–Սասուն թշնամական երկրների էթնիկական

տարբեր խմբերի հակադրության գաղափարով: Ի դեպ, գաղափար, որը վիպական ներքին տրամաբանությանը բնավ չի հակասում:

Աշխատությունը հագեցած է գիտատեղեկատվական բազմահարուստ տվյալներով, ծանոթագրություններով, ռուսերեն, անգլերեն ամփոփումներով: Մենագրությունը հեղինակի երկար ու ձիգ տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքն է: Այդ տարիներին նա ձեռք է բերել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հիմնավոր գիտելիքներ, սկզբնաղբյուրների լիարժեք իմացություն, նյութն ազատ ու անկաշկանդ վերլուծելու հմտություն:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ